

ԳԵՐՀԱՐՏ ՀԱՌԻՊՏՄԱՆ ԵՒ ՆԲԸ ԳԼԽԱԽՈՐ ԵՐԿԵՐԸ

Die Dichter sind die Thränen der Geschichte,
Die heisse Zeiten mit Begierde schlürfen...

G. Hauptmann

I

Շլեզիայի կուրօրաների շաբքում մեծ հաջակ էր վայելում Օբերգալցրուննը: Գեղեցիկ է նա իր դիրքով՝ զրաւիչ է ձոյլ բուսականութեամբ: Բնութեան այդ գեղեցիկ վայրում 1862 թ. նոյեմբերի 15-ին ծնուեց Գերհարտ Հառլապտման *): Նրա հայրը — Բօրերտ Հառլապտմանը «Zur Preussischen Krone» հիւրանոցի տէրն էր և յայտնի էր իր կարգապահութեամբ, մաքրասիրութեամբ ու ուղղամիտ բնաւորութեամբ: Նրա մայրն էլ ունէր զգայուն սիրտ, զեղուն զգացմունքներ և սէր ու զութ գէպի խեղճերն ու ընկճուածները: Նա ջանասէր էր բասիս բուն նըշ շանակութեամբ և աշխատում էր գիշեր-ցերեկ, կատարում էր տնային գործերը, օկնում էր ամուսուն, ինչամում էր երեխաներին:

Ահա այդպիսի ծնողների հոգատարութեան տակ մեծացաւ մանուկ Գերհարտը: Նա ունէր իրանից մեծ չորս քոյրեր և 2 եղբայրներ, բայց գրանցից տարրերուում էր իր բնաւորութեամբ ու ընդունակութեամբ: Նա դեռ եօթը տարեկան հասակում իր քոյրերի հետ սկսեց այցելել զիւզական դպրոցը, որի զեկավարն էր Բենգել անունով մի ուսուցիչ: Մանկավարժական տաղանդից զուրկ էր այդ ուսուցիչը, բայց զիւէր գրաւել իր սաներին, զիւէր քաղցրացնել նրանց օրերն ու ժամերը: Շատ անգամ նա տանում էր նրանց բացօղեայ զբօսանքի, շատ անգամ

*) Կենսագրական տեղեկութիւնները Հառլապտմանի մասին քալում ենք հետևեալ աղբիւրներից: 1) P. Schlenther: „G. Hauptmann“, 2) A. Hanstein: „G. Gauptmann“, 3) A. Bartel: „G. H.“ 4) U. Woerner: „G. H.“ 5) A. Stern: „Studien zur Litteratur der Gegenwart“.

թափառում էր նրանց հետ դաշտերում ու անտառներում, սառութեամ ու ձորերում: Դժբախտաբար այստեղ ոչ միայն ազատ բնութեան գեղգեղանքն էր մատաղ սաներին զբաղեցնողը, ոչ միայն թռչունների քաղցր դալայլիկը, միջատների միակերպ բզզոցը և ծաղիկների անուշ բուրմունքն էր նրանց մագին ու պատին մնանդ տուողը, այլ և չոր ու ցամաք լատիներէնն իր քերականական կանոններով, Աւասուցիչը մերթ ընդ մերթ բացատրում էր այս կամ այն կանոնը և ապա կրկնել տալիս իսկ փոքրիկ Գերհարտը ատում էր այդ պարապմունքը: Նրա համար աւելի գրաւիչ էին հայրական զրադարանի բնագիտական ուսկեցօծ գրքերը, քան թէ գալրոցական լեկսիկօնն ու քերականութիւնը: Նա ամենավատ աշակերտներից մէկն էր...

1874 թուականին նրան ուղարկեցին Բրեսլաու՝ եղբայրների մօտ, որպէս զի պատրաստուի և մտնի տեղական ըէալական գլորոցը: Սակայն այս տեղափոխութիւնը և այս նոր գլորոցը աւելի վատ ազդեցին Գերհարտի վրայ, Տարիներն անցնում էին միմևանց յետեից, բայց նա չէր առաջադիմում, զասարանը չէր փոխում: Աւասուցիչները չէին կարողանում թափանցել նրա հոգու մթին խորքը, իսկ ինքը՝ գեղջուկ երեխան չէր հասկանում ուսուցիչներին, չէր ըմբռնում՝ քաղաքային բարդ կեանքըն ու յարաբերութիւնները: Դալրոցական ընկերներն էլ ծաղը ու ծանակի առարկայ էին գարձնում նրա վազաժամ ցնորքներն ու վառ երեւակայութիւնը:

Նրա մեծ եղբայր Կարլը նկատում էր այս ամենը և յուս սահատ կերպով մտածում, թէ արգեօք ինչ է լինելու այդ անշնորհք երեխայի վերջը, թէ ինչ է լինելու նրա բաղդն ու վիճակը... Բայց անողոք ճակատագիրը ինքը վճռեց այդ ծանր հարցը:

Թօբերտ Հառւապտմանի գործերը շատ անաշող էին զնում: Ելեղիայում տիրող ազգային երկապակութիւնները հետզհետէ սուր կերպարանք էին ստանում: Լեհացի մագնատները այլևս չէին յաճախում Օբերգալցբրուննը: Հալորդակցութեան յարմար և էժան միջոցների չնորհիւ նրանք աւելի հեռաւոր տեղեր էին գնում, գերմանացիներից աւելի հեռու մնալ էին աշխատում: Եւ «Zur Preussischen Kroné» հիւրանոցի լայնարձակ դահլիճներն ու սենեակները դատարկ էին մնում: Այդպիսի ձախորդ հանգամանքների պատճառով Հառւապտմանի պարտգերը աւելանում էին, այնպէս որ վերջ ի վերջոյ նա զրկուեց իր ամբողջ ունեցուածքից և դատարկաձեռն հեռացաւ: Օբերգալցբրուննից ևս երկաթուղու կայարանի կապալառուն դարձաւ:

Նիւթական միջոցների սղութեան պատճառով նա ստիպ-

ուած էր դպրոցից հանել Գերհարտին։ 1878 թ. ապրիլ ամսին վերջինս հեռացաւ Բրեսլաուից, իր հետ վերցնելով ստացած վլայագիրը, որ միխթարական շատ քիչ բան էր պարունակում իր մէջ։

Այստեղ որոշուած էր նրա վարքը—լաւ, աշխատասիրութիւնը—բաւարար, իսկ ընդունակութիւնն ու ուշադրութիւնը—մի հաստիկ միաւորով։ Միւս առարկաներից լաւ էր միայն նըկարչութիւնը։ Արդեօք Բնչ կարող էր դառնալ այդպիսի պատանին։

Նրա դպրոցական տեսրակների մէջ կային բազմաթիւ լիրիկական ոտանաւորներ, որոնց վրայ նշմարւում էր Անդէրսէնի ուժեղ ազդեցութիւնը։ Քիչ չէին դրանց մէջ այնպիսի ոտանաւորները, որոնցից բանաստեղծական չնորդք էր բուրում։ Գերհարտի եղբայրը—Կարլը կարգում էր այդ տեսրակները, այդ վաղաժամ բանաստեղծութիւնները և ինքն իրան մտորում, թէ արդեօք հնարաւոր է, որ տամննեինսդ տարեկան մի պատանի, առանց ընդունակութեան, առանց նոյն իսկ միջնակարգ կրթութեան գրական ասպարէզը մտնի—հեղինակ դառնայ։

Բայց հայրը թոյլ չտուեց, որ ազատութիւնն ու ժամանակը լուծէին այդ հարցը։ Նա Գերհարտին իսկոյն ուղարկեց Շարիգառուր, որտեղ նրա քենակալը—Շուրեկրտը երկու կալուածների կառավարիչ էր։ Այստեղ Գերհարտը պիտի օգնէր Շուրեկրտին և ապրէր նրա տանը, նրա հսկողութեան տակի եւ նա մեծ ուրախութեամբ դիմեց գէպի նոր բնակավայրը, որովհետեւ յոյս ունէր այնտեղ վայելել մաքուր օդ ու լոյս, ազատ կենցազ ու հանգիստ։

Գերհարտը միանգամայն հասաւ իր նպատակին, գտաւ իր սպասածները և դրանց հետ միասին մայրական խնամք ու հոգացողութիւն ամբողջ ընտանիքի կողմից։ Այստեղ էին նրա երկու մօրաքոյրերը, որոնցից մէկը հիանալի երգում էր, իսկ միւսը ածում դաշնամուրի վրայ։ Շատ երեկոներ հաւաքւում էր ամբողջ ընտանիքը և ունկնդիր լինում այդ հմայիչ երաժշտութեանը, այդ գրաւիչ երգեցողութեանը։ Գերհարտն էլ այդ ժամանակ լուռ ու մունջ նստում էր ու լսում, լսում էր ու աւելի մոայլում։ Երաժշտութիւնը բաց էր անում նրա զգացուն սիրտը և առաջ քաշում բանաստեղծական նուրբ ձգտումները։ Անհասկանալի թախիծը մեծանում էր օրէցօր և կտրում նրա հանգիստը։ Գիւղական կեանքը այլ ես բաւականութիւն չէր տալիս նրան, նա ձգտում էր գէպի հեռուն, դէպի մի անորոշ նպատակ...

1880 թ. նա վերադարձաւ Բրեսլաու և իր եղբօր ջան-

քերով ընդունուեց «Գեղարուեստաց դպրոցի» նախապատրաստական դասարանը: Բայց այստեղ էլ նրա բաղդի անհւը չբանեց, այստեղ էլ նա չը կարողացաւ ցանկալի առաջադիմութիւնը ցոյց տալ և 1881 թ. դպրոցից արձակուեց: Դրանից յետոյ նա մի տարի էլ աշխատում էր իր հօգանաւոր՝ քանդակործութեան պրօֆեսոր Հերտելի մօտ, որը կարդացել էր նրա ձեռագիր բանաստեղծութիւնները և աշխատում էր ամեն կերպ զարկ տալ նրա տաղանդին ու մտաւոր զարգացման: Այդ միեւնոյն հովանաւորի չնորհիւն էր, որ նա 1882 թ. ընդունուեց Ենայի համալսարանը—իբրև պատմութեան ուսանող: Նոր կեանքը, նոր միջավայրը ունեցաւ գորեղ ազդեցութիւն: Գերհարտը ջերմ կերպով հետաքրքրուել սկսեց բնագիտական ու հասարակական գիտութիւններով: Դարվինն ու Կարլ Մաքսը նրա ընթերցանութեան ամենասիրելի նիւթերն էին: Դարվինիզմն ու Մարքսիզմը նրան ամենից շատ զբաղեցնող հարցերը դարձան:

Բայց այդ նոր գրութիւնն էլ չը կարողացաւ նրա հոգեկան թափիծը փարատել, նրա մելամաղձուտութիւնը վերացնել: Նա որոշեց երկար ճանապարհորդութեան մէջ որոնել հանգիստ ու խաղաղութիւն: Եկաւ Համբուրգ, որտեղ նրա մեծ եղբայրը—Գեօրգը ամուսնացել էր և առևտրական գործ սկսել և այդտեղից նաևով ճանապարհ ընկաւ դէպի Միջերկրական ծովի Սպանիայի և Իտալիայի նաւահանգիստներն այցելելով նա հասաւ Բիենիիա, որտեղ նրան սպասում էր Կարլ եղբայրը: Այստեղից երկու եղբայրները միասին շարունակեցին ճանապարհորդութիւնը: Նըւրանց գրաւում էր Իտալիան իր բնութեան գեղեցիկ տեսարաններով: Սակայն նրա կիմնան վատ աղդեց Գերհարտի առողջութեան վրայ, ուստի երիտասարդ ճանապարհորդները ստիպուած էին օր առաջ վերադառնալ Գերմանիա:

Սակայն այդ բանաստեղծական երկրի թողած տպաւորութիւնները այնքան խորը, այնքան ուժեղ էին, Գերհարտի ձըդտումը դէպի գեղարուեստը այնքան եռուն էր, որ նա երկրորդ անգամ այցելեց Իտալիան և այս անգամ նոյն իսկ քանդակագործութեան մի արհեստանոյ հիմնեց Հոռվմում: Բայց նրան վիճակուած չէր երկար մնալ այդտեղ: Վերահաս ծանր հիւտնութիւնը նրան նորից տարաւ հայրենիք և յանձնեց սիրեցեալ նշանածի—Մարիայի ինսամքին: Անցան հիւտնութեան օրերը և Գերհարտը պատկուեց (1885) Մարիայի հետ, կազմելով մի երջանիկ զոյգ: Կնոջ բաժինքը հնարաւորութիւն տուեց Հասւպաւմանին հեռու մնալ սիրեական հոգսերից, առօրեայ կարիքներից և ամբողջապէս նուիրուել գրականութեանը:

Արդէն անցել էր գեգերումների շրջանը, արդէն պարզ-

ուել էր, որ Հառւպտմանի կոչումը բանաստեղծութեան մէջն էր: Դեռ ուսանողութեան շրջանում, գեռ իր ճանապարհորդութեան ժամանակ նա բանաստեղծօրէն արտայայտում էր իր զգացմունքներն ու ապաւորութիւնները, գրում էր լիրիկական ստանաւորներ, բայց դրանք չէին նրան հոչակ պարգևողները, այլ յետագայ գրուածքները—դրամանները:

II

Բանաստեղծում էր Հառւպտման, բայց անհասկանալի էին նրա բանաստեղծութեան մթին մտքերը: Բոլոր ստանաւորների մէջ աչքի էր ընկնում միայն մի ընդհանուր զիծ, մի ընդհանուր առանձնայատկութիւն—դա հեղինակի զգացուն սիրան իր, որ միշտ թէքում էր դէպի թշուառների, ընկճուածների կողմը, դա նրա զեղուն զգացմունքներն էին, որ միշտ դուրս էին թոչում յանուն արդարութեան, յօգուտ խեղճերի, անօգնականների:

Եւ այդ բանում շատ մեծ դեր էին խաղում մանուկ հասակում ստացած ապաւորութիւնները: Դեռ Օբերզայցբուննում եղած ժամանակ նա տեսնում էր հասարակական կեանքի անհաւասարութիւնը, տեսնում էր մի կողմում իր հօր հիւրանոցի հարուստ յաճախորդներին, իսկ միւս կողմում հարևան գիւղերի աղքատիկ գիւղացիներին. մի կողմում—շոայլութիւն ու փարթամութիւն, իսկ միւս կողմում—ծայրայեղ ձբաւորութիւն ու խեղճութիւն... Տեսնում էր այդ ամենը և իր սրտի խորցում աննկատելի կերպով արմատացնում ատելութիւն դէպի հարուստաներն և ուժեղները...

Դպրցում եղած ժամանակ նա պախարակում էր այն զիտութիւնները, որոնք հետու էին կանգնած կեանքից ու իրականութիւնից, որոնք միայն սակաւաթիւ ընտրեաների սեփականութիւնն էին կազմում...

Սպանիայում և Խտալիայում ճանապարհորդելիս նա տեսնում էր ընութեան հարստութիւններն ու գեղեցիկ տեսարանները, բայց դրանց հետ միասին տեսնում էր և չոր հացի կարու, կարիքների տակ ճնշուած ընակիշներին, և այդ ամենը խոր գրոշմ էր թողնում նրա փափուկ սրտում:

Ահա այդ հակադիր ապաւորութիւնների բովով են անցել նրա բանաստեղծութիւնները, դրանց ազգեցութեան տակ է գրուած «*Prometheidēnlos*» էպօռ:

Սելին անունով մի երիտասարդ է այդ գրուածքի հերոսը՝ նա հեռանում է հայրենական տնից և ծովային ճանապարհոր-

դութիւն սկսում նա դառնութեամբ է յիշում իր անցեալը, բննականներ է համարում իր դաստիարակներին, որոնք միայն ոյժի բննակալութեան միջոցով էին գործում: Նա մայլ է և յուսահատ: Սակայն օգնութեան են համնում երկու գեղանի կանաքը, որոնք ուզում են առաջնորդել նրան դէպի առաջ, դէպի ապագան...

Այդ կանանցից մէկը բռնել է ձեռքին փորիչ դուրը—դա քանդակագործութեան մուսան է, իսկ միւսը—շղարչն ու դափնինեայ պսակը—դա էլ բննաստեղծութեան մուսան է: Խեղճուկ Սելինը տատանւում է այդ երկուսի մէջ տեղը և չը գիտէ որին հետեւ, որի խորհուրդը կատարէ...

Սպանիա այցելելով, նա առաջին անգամ տեսնում է զեղին կեանքը, առաջին անգամ հասկանում է անառակ կանանց անբարոյականութիւնը: Զայրոյթի հետ միասին նրա սրտում զարթնում է և յաւակցութեան զգացմունքը: Զարիքի ամրող յանցանքը նա գցում է այն մարդկանց վզին, որոնք խարուսիկ յոյներով այդ կանանց դուրս են մղել բարոյական ճանապարհոց: Նա որոշում է քարոզել մի նոր կրօն, մի նոր դաւանանք, որը իր հովանաւորութեան տակ առներ և բախտազուրկ թշուառներին և անառակութեամբ հալ ու մաշ եղած կանանց: Նա հէնց նաւի վրայ սկսում է իր քարոզը, բայց մարդիկ նրան չեն հասկանում, ամրոխը նրան ծաղր ու ծանակի առարկայ է դարձնում:

Սելինը շարունակում է իր ճանապարհը, և համում է մինչեւ Խտալիա: Այստեղ էլ նա տեսնում է սով ու աղքատութիւն, ծայրայեղ կարիք ու յուսահատութիւն: Զգայուն սիրաը նորից վրդովում է տիրող անարդարութեան դէմ: Նա նորից վճռում է թշուառների բախտին զոհել իր ջանքն ու եռանդը, իր երգն ու կեանքը: Նա ուզում է բարձրանալ մինչեւ «անյուսալիթութեան ժայռը» և այնտեղից քարոզել ճշմարտութիւնը: Բայց յանկարծ յուսահատութիւնը տիրում է նրան և վարդագոյն երազը մնում է անկատար: Զայրացած Սելինը ծովի անդունքն է շպրտում իր քնարը և միայնակ մնում: Գալիս է բանաստեղծութեան մուսան և ջրասոյզ քնարը երկինք բարձրացնում: Իսկ Սելինը մնում է դատարկածեռն, մնում է յուսահատ ու յուսախար:

Այստեղ հեղինակը յանդիմանում է Սելինին, պախարակում է նրա թուլակամութիւնը և կարծես դրանով ցոյց տալ է ուզում, թէ ինքը արդէն անցել է այդ շրջանը, պատրաստ է «անյուսալիթեան ժայռը» բարձրանալ, պատրաստ է միշտ իր մօտ պահել քնարը և նրա լարերը հնչեցնել յանուն արդարու-

թեան ու ձշմարտութեան, յօգուտ թշուառների ու հալածուածներին:

Մի ուրիշ տեղում՝ Հառուպտման աւելի բնորոշում է իր այդ պարտականութիւնը, զրելով.

Իմ ազատ սրտի, իմ անկախ կամքի ինչ փոյթն է,

Թէ ինձ չեն գնահատի այժմ և ապագայում.

Ես երգում եմ, նպատակս հասկանալով...

Եւ իսկապէս Հառուպտման իր բեղմնաւոր գրչով դարձել է մի անվախ զինուոր, որ միշտ կոխի է մղում ցանկալի նպատակին համանելու համար, որ միշտ ասպարէզ է մտնում իր անկաշառ ձայնը լսելի դարձնելու համար: Նա մեծ եռանդով ուսումնասիրում էր էվոլիցիայի և անտեսական մատերիալիզմի թէօրաները, Հետեւում էր հասարակական հրատապ հարցերին, բայց և այնպէս մնում անկախ, առանց միանալու այս կամ այն կուսակցութեանը: Նա ուշիւուչով կարդում էր «պատմութեան որոս ու կայծակ» համարուող Շիլէրին, բայց չէր ենթարկում նրա ազգեցութեանը: Նրան աւելի զրաւում էր Բայրընը իր համաշխարհային վշտով, Զօլան իր նկարագրած կեանքի քստմելի երեսութներով: Սակայն այսուել էլ պահպանում էր իր ինքնուրոյնութիւնը:

Անա այդ է պատճառը, որ մի զարմանալի բազմակողմանիութիւն է նշմարւում նրա բոլոր զրուածքներում, որ կարէլի է բաժանել վեց զանազան կատեգորիաների: 1) Նօվելլաներ՝ «Bahnwärter Thiele» և «Der Apostel». 2) սօցիալական դրամաներ՝ «Vor Sonnenaufgang» և «Die Weber». 3) Ըստանեկան կեանքից վկրցրած դրամաներ՝ «Das Friedensfest», «Einsame Menschen», «Fuhrmann Henschel» և «Michael Kramer». 4) Կոմեդիաներ՝ «College Crampton» և «Der Biberpelz». 5) Պատմական դրամա՝ «Florian Geyer», վերջապէս 6-րորդ տիղը ըրունում է նրա հերիաթափառն և միստիկական դրամաները՝ «Die versunkene Glocke» և «Hannele»:

III

Նօվելլաներից մենք կը պատմնք 1887 թուին զրուած «Երկաթուղու պահապան Տիլը» («Bahnwärter Thiele»)-ի բովանդակութիւնը: Բարդ չէ այդ պատմուածքը, երկար չէ նրա բովանդակութիւնը, բայց չափազանց յուղիչ, չափազանց խոր է նրա թողած տպաւորութիւնը:

Գլխաւոր հերոսը պահապան Տիլն է—մի բարեսիրո ու

աշխատասէր մարդ: Նա միշտ ճշտութեամբ կատարում է իր պաշտօնը, գնացքը մօտենալիս կանդնում է ճանապարհի կողքին և բաց անում կանաչ դրօշակը: Հեալով ու թանձր ծուխ արձակելով անցնում է գնացքը, իսկ Տիլը վերադառնում է փայտէ խուցը և նորից անձնատուր լինում իր մտածմունքներին, իր անցեալի տխուր յիշողութիւններին...

Տխուր է Տիլը, մշտական թախիժ են արտայայտում նրա աչքերը... Տարիներ առաջ մեռաւ նրա առաջին կինը—նիհարիկ, բարեսիրտ Մենասն: Մեռաւ նա, իր յետեից յիշատակ թողնելով նորածին Տօրիասին: Տիլը նորից ամուսնացաւ, բայց երկրորդ կինը—Լենան չուներ ցանկալի զութն ու բարեսրտութիւնը, երկրորդ ամուսնութիւնը զուրկ էր հոգեկան կապից, միայն տոփանքն էր նրա հիմքը կազմում:

Սյապիսի պայմաններում ցաւալի էր փոքրիկ Տօրիասի վիճակը: Նա մեծանում էր առանց խնամքի, առանց մայրական գորովի: Խորթ մայրը շատ յաճախ ծեծում էր նրան ու նեղութիւն տալիս: Նրա կեանքը դառն էր ու չարքաչ:

Նկատում էր այդ բանը պահապան Տիլը և աւելի ալիս րում, Յաճախ նա նատում էր միայնակ, բաց էր անում ալօթքագիրքը, գնում էր առաջը հանգուցեալ կնոջ պատկերը և երդում ու աղօթում, աղօթում ու պատկերին նայում: Այդ բոպէին պատկերը գառնում էր նրա համար մի աստուածութիւն, մի պաշտելի սրբութիւն:

Ընտանեկան կեանքը չէր գրաւում Տիլն: Տօրիասն էր նրա միակ միսիթարանքը, հաստիկ-կայտառ Տօրիասը: Եւ հոգատար հօր մի հատիկ տենչանքն էր ճանապարհի վարպետ դարձնել նրան: Այդքանն էլ մեծ բան էր նրա համար: Բայց անողոք ճակատագիրը այլ կերպ էր անօրինել:

Աշնանային օր էր—սև ու մութ օր Տիլի համար: Գիշերը շատ վատ երազ էր տեսել: Տերեկն էլ նրա աչքին մերթ ընդ մերթ երեսում էր Մենասյի դալուկ դէմքը և կարծես մի ինչ-որ բանի համար յանդիմանում:

Ահա նրա մօտ են կինն ու երեխաները: Կայտառ Տօրիասը խաղում է, իսկ կինը աշխատում: Տիլը նայում է շուրջը և աւելի մուպյլում: Ահա լսում է աղդանշան զանգը, երեսում է վիթխարի օձը—գնացքը: Տիլը վագում է իր տեղում կանգնելու, պայմանական դրօշակը ծածանելու:

Բայց ինչ սարսափ... գնացքը յանկարծ կանգ է առնում... Դժբախտութիւն, դժբախտութիւն, լսում է այս ու այն կողմից: Մարդիկ վագում են դէպի բելաները: Վագում է և Տիլը և ինչ է տեսնում: Ճանապարհի մէջ տեղը կիսամահ

ընկած է Տօրիասը։ Գնացքը նրա վրայից էր անցել... և ւում են ցաւակցութեան բացականչութիւններ, լսում է շոգեկառքի շփոք և գնացքը, փրթկալով ու հեւալով, նորից առաջ է շարժւում։

Մնում է Տիլը ձեռքերը ծոցում, դառն վիշտը սրտում նրա աչքերը արցունք չեն թափում, բայց դրա փոխարէն մի կատաղի զայրոյթ են արտայայտում։ Լաց է լինում նրա կինը, բայց որքան անկեղծ է այդ լացը... Մնում է յուսոյ մի չնչին նշոյլ—բժշկի օգնութիւնը։ Բայց շուտով այդ յոյսն էլ ոչնչանում է։ Տօրիասն երեկոյեան աւանդում է հոգին...»

Լուսանում է։ հարեանները բազիսում են Տիլի բնակարանի դուռը, բայց ձայն-ձպտուն չի լսում։ Ներս են մանում և ինչ տեսնում։ յատակի վրայ արեան մէջ ընկած է անշունչ կենան, իսկ նրա կշտին—խեղդամահ արած փոքրիկ երեխան։ Հապա այդ բոլորի յանցաւոքը, հապա Տիլը... նա անհետացել է։

Որոնում են և գտնում Տիլն։ Նա պառկած էր երկաթուղու բելմների վրայ—Տօրիասի կարմրաւուն զլիսարկը ձեռքին։ Կանչում են նրան, խօսում են հետը, բայց նա տեղից չի շարժում, միայն մի դառն քբքիջ է արձակում։ Նա գժուած էր...»

Այդ փաքրիկ նովելայի բովանդակութիւնից երեսում է, որ նրա զլիսաւոր հիմքը հոգեբանական վերլուծումն է, թէ և պակաս չեն կենցաղագրական տեսարանները։

Իր ձեռվ դրանից աւելի բարձր է «Առաքեալը» («Der Apostel»), սակայն այստեղ էլ նիւթն է աւելի մութ և միսափեական։ Բայց մննք կ'անցնենք երկրորդ կատեգորիայի գրուածքներին։

IV

Սօցիալական դրամաներից առաջին տեղն է բոնում Զուլհակներ (Die Weber), որի նիւթը վերցրած է անցեալի պատմութիւնից։ Այդ դրաման մեծ խլրառում բարձրացրեց ոչ միայն Գերմանիայում, այլ և ուրիշ երկրներում։ Իշխող դասակարգերն էին նրան հալածողները, յուզուած կապիտալիստներն էին նրա դէմ աղմուկ բարձրացնողները, եւ այդ երեսոյթը որոշ չափով հասկանալի կը դառնայ, եթէ աչքի առաջ ունենանք, որ «Զուլհակները» իսկապէս մի կենդանի բողոք է կապիտալիսմի դէմ, մի ցնցող պատկեր է աշխատաւոր դասի դրութեան։

Գործողութիւնը տեղի է ունենում Շլեզիայի լեռներում—
1844 թուականին։ Հառապտմանը իր հօրից էր լսել այդ պատ-

մական դէպքի մասին, իսկ յետոյ աւելի հիմնաւոր կերպով ուսումնասիրել էր փաստը գրական աղբիւրներից *):

Դրամայի առաջին գործողութիւնը պատկերացնում է ջուլ-հակների փող ստանալը գործարանատէր Դրայսիգերի գանձապահից: Զափազանց ազգու է այդ տեսարանը. գանձապահը խստութեամբ ցոյց է տալիս իրաքանչիւր ջուլհակի հաշիւր, վճարում է փողը, առանց ուշք դարձնելու նրանց բողքներին ու աղերսանքին: Թշուառները դողդողջուն ձեռքով վերցնում են փողը և հեռանում: Բայց այդպէս չփարւում ջուլհակ Բէկ-կերը: Նա համարձակ կերպով յայտնում է, որ դա իրանց իսկական վարձատրութիւնը չէ, այլ միայն չնչին փշրանքները, որ մի անգութ տղրուկ է գործարանատէր Դրայսիգերը, և այլն: Մօտենում է Դրայսիգերը բայց Բէկկերը գեռ շարունակում է իր արդար բողքը: Վէճը սուր կերպարանք է ստանում: Բաղմութիւնն աւելանում է... Հէնց այդ բոպէին մի անսպասելի դէպք գրաւում է հաւաքուածների ուշագրութիւնը: Ութ տարեկան մի նիհարիկ երեխայ ուշաթափ գետին է փուռում: Դրայսիգերը բարկանում է և կշտամբանք թափում ծնողների հասցեին, որ չը գիտեն կարգին խնամել իրանց երեխաներին: Սակայն ծնողները չէին դէպքի պատճառը, այլ քաղցածութիւնը: Բէկկերի առաջարկութեամբ մի կտոր հաց են տալիս երեխային, որ նա ագահութեամբ կլանելով հացը հեռանում է, իսկ գործարանատէրը գեռ շարունակում է յանդիմանել բանուորներին, դեռ խօսում է նրանց ապերախտութեան մասին...

Երկրորդ գործողութիւնը ընթերցողին տանում է Անդօրգէի խրճիթը, որը պատկերացնում է ամենածայրայեղ աղքատութիւնը իր ամբողջ էութեամբ: Այստեղ գալիս է ցնցոտիներով ծածկուած մի կաղ ու յղի կին և ալիւր աղերսում:

— Արդէն մի քանի օր է, որ երեխաներս ոչինչ չեն կերել, ասում է նա և գառն արցունք թափում աչքերից: Բայց ի զուր, ամբողջ խրճիթում ուտելու ոչինչ չը կայ և հեռանում է դատարկաձեռն:

Դրանից յետոյ գալիս է պահեստի զինուոր Մօրից եղերը

*) Ալդ ճնշուած, կեղեքուած ջուլհակների ապստամբութիւնը մանրամասն կերպով նկարագրուած է Հէնրիխ Տրաչէկի „Deutsche Geschichte im neunzehnten Jahrhundert“ աշխատութեան Վ-րորդ հատորում: Խակ 1885 թուականին լոյս տեսաւ տնտեսագէտ Ալֆրեդ Ցիմմերմանի մօնոգրաֆիան՝ „Blüte und Verfall des Leinengewerbes in Schlesien“ վերնագրով, որ չառուպտմանի լուրջ ուշադիրութեանն արժանացաւ:

և սկսում է գովել զինուորական կեանքը և վատարանել ջուր-
հակների դրութիւնը: Նրա ներկայութեամբ խրձիթում սկսում
են ճաշի պատրաստութիւն տեսնել, բայց ինչ են ուտելու...
Շան միտ ճաշակում են այդ անսովոր կերակուրը և քիչ յետոյ
ստամբուխ ցաւից զանգատում: Տեսնում է այդ ամենը Եգերը
և սարսափահար լինում: Նա մեծ զայրոյթով է խօսում գործա-
ռանատէրերի մասին: Օձեր ու զահիմներ է անուանում նրանց:
Զուլհակները ուշի ուշով լսում են նրա ճառերն ու ստանաւոր-
ները և նոյն իսկ ողերւում են, երբ նա գործարանատէրերի
հասցէին ասում է.

—Դուք մարդասպաններ էք, դուք դահիճներ էք սատա-
նայական ցեղից: Բայց արդէն ժամ է հասկանալու, որ մեր ժա-
մանակն էլ հասել է...

Այդ րոպէին վեր է ցատկում ծերուկ ջուլհակը—Բառ-
մերտը և ձեռքերը երկարացնելով, բացականչում է.

—Ահա տեսէք ինձ ինչ են արել, իմ ինչն են թողել...
Միայն կաշի ու սկսում... Այս դուք դահիճներ սատանայա-
կան ցեղից...

Դրանից յետոյ գործողութիւնը տեղի է ունենում գարե-
ջրատանը: Այստեղ են հարուստ զիւղացին ու կոմսերի մօս
ծառայող անտառապահը: Նրանք արհամարհանքով են վերա-
բերում դէպի ջուլհակները... Հետզհետէ ամբոխը մեծանում
է... Զուլհակները սկսում են երգել իրանց սիրելի երգը Դրայ-
սիգերի մասին: Միջամտում են ժանգարմները, տեղի է ունե-
նում ընդհարում...

Այդ մասյ ու մութ խորշերից, ցնցող տեսարաններից
յետոյ, ընթերցողի առաջ պատկերացնում է գործարանատէր
Դրայսիգերի շքեղազարդ սենեակները: Այդտեղ խօսակցում են
պատօր կիտտեհառուզը և ուսուցիչ Վայնհօլդ: Առաջինը պաշտ-
պան է Դրայսիգերի, իսկ երկրորդը—բանուորների: Նրանց
խօսակցութեան ժամանակ ներս են մտնում Դրայսիգերը ամու-
սինները, իսկ դրսից լսում է ջուլհակների ծաղրական երգը:
Զայրանում է Դրայսիգերը... Երիտասարդ ուսուցիչը փորձում
է պաշտպանել ջուլհակներին, նկարազրում է նրանց թշուառ
վիճակը, նրանց սովոր ու կարիքները, բայց Դրայսիգերը աւելի
կատաղում է և պաշտօնից զրկում է բանուորի այդ ինքնակոչ
պաշտպանին: Հետանում է ուսուցիչը: Այդ րոպէին ներս է
մտնում գործակատար Պֆէյֆերը և յայտնում է, որ ձերբակալ-
ուած է խանակիչ Եղերը: Բերում են Եգերին. նա սկսում է
համարձակ կերպով խօսել ու վիրաւորել թէ Դրայսիգերին և

թէ նրա գործակատարին. իսկ դրսում ամբոխը աւելի կատա զում է... Նա վերջապէս ոստիկանութեան ձեռքից խլում է Ն-գերին... Դրութիւնը աւելի կրիտիկական է գառնում: Դրայսի-գերը կոչ հետ կառը է նստում և գաղտնի կնրպով փախուստի դիմում: Քարերի մի ամբողջ տարափ է թափւում նրա բնակարանի վրայ. ջարդում են ապակիներն ու դժները: Ամբոխը ներս է լցւում. սկսում է թալանն ու աւերումք: Այդտեղից ջուրհակները յաղթական արշաւանքով, ազատութեան երգեր երգելով, առաջ են զիմում:

Վերջին գործողութիւնը ծերուկ ջուրհակ Խիլդէի խըր-ճիթումն է տեղի ունենում: Հին գաւանանքի, հին բարոյակա-նութեան ներկայացուցիչն է այդ ծերուկը: Նա Տօլստօվի նման քարոզում է խոնարհուել չարիբի առաջ, հնազանդուել թշնա-մու լժին: Նա ամբողջ սրտով հակառակ է ջուրհակների ազըս-տամբութեանը: Նրա որդին, Գօթլիքը, տատանուում է հին և նոր համոզմունքների մէջ տեղը, իսկ հարսը—Լուիզան ամբողջ հոգով ապստամբներին կողմնակից է: Ներս են մտնում ջուր-հակները Բէկերի առաջնորդութեամբ: Վերջինս սկսում է հա-մոզել Խիլդէին:—Ինչ որ չեն տայ կամքով ու յօժարութեամբ, ասում է Բէկեր, կը վերցնենք ոյժով ու բռնութեամբ...

Բայց Խիլդէն մնում է անդրդուելի.

—Դուք կը հեռացնէք երկու զինուորի, նրանց տեղ կը գան տասը, պատասխանում է նա գառն ժամիտով և նստում իր սստայնի առաջ:

Բայց այդ րոպէին սկսում է իրարանցում: լսում է զին-ուորների հրացանաձգութիւն, զնտակը գալիս դիպչում է յա-մառ ծերուկին: Նա մեռնում է... իսկ դուրսը լսում է հազա-րաւոր ջուրհակների միահամուռ երգն ու աղմուկը:

Դրանով վերջանում է զրաման, Ի՞նչպէս տեսանք, նա զրեթէ լուսանկարչական ճշութեամբ, միայն աւելի գեղա-րուեստորէն, վերաբադրել է պատմական փաստը: Հէնց այդ ճշութրւնն է պատճառը, որ նա զուրկ է զիմանը հերոսից: Եթէ հեղինակը ուղինար մի այսպիսի ձև տալ իր դրամային, ինչպէս, օրինակ, Շիլլերի «Վիլհելմ Տելլ», այն ժամանակ պի-տի հեռանար պատմական իրողութիւնից, որ ցանկալի չէր նրա համար:

V

Այժմ դառնանք ընտանեկան կեանիք պատկերացնող դրա-մաներին, որոնցից է և «Մենակ մարդիկը»:

Հառուպտմանի «Մենակ մարդիկ» («Einsame Menschen») գրաման^{*} անհամապատասխան ամուսնութեան պատկեր է տալիս: Բայց այստեղ անհամապատասխանութիւնը բոլորովին ուրիշ դրամ է կրում, քան միւս դրամաներում:

Այստեղ ընդհարումը տեղի է ունենում այնպիսի մարդկանց մէջ, որոնցից իւրաքանչիւրն իր չափով ազնիւ է ու մաքուր, անկեղծ է ու համոզաւած:

Գլխաւոր հերոսը Յովիաննէսը իրան մենակ է զգում, որովհետև կինը—Կէթէն չի կարողանում հասկանալ նրա մաքի ելեէջները: Նա իր ամբողջ էութեամբ սէր է, մի անարատ ու անջինջ սէր, բայց սիրային անձնուիրութիւնը յագուրդ չի տալիս Յովիաննէսին: Ուրիշ է նրա պահանջները...

Ծնողներն ու շրջապատողներն էլ չեն հասկանում նրան:

Յայտնում է ուսանողուհի Աննան, հասկանում է այդ պահանջները և զրանով գրաւում Յովիաննէսի սիրան ու խելքը... Սակայն չուտով նա էլ հեռանում է, նորից հոգեկան մենակութեան մէջ թողնելով Յովիաննէսին: Յուսահատութիւնը աւելի զօրեղանում է:

Նա լճի ալվաների մէջ է որոնում իր փրկութիւնը...

Այստեղ էլ ընտանեկան կատաստրոֆ, այստեղ էլ մարդկային զոհ: Սակային այդ զոհը իր ամբողջ էութեամբ տարբերում է ընտանեկան կարգերի այլ տիպի զոհերից...

«Մենակ մարդիկ» դրաման չափազանց տպաւորիչ—հետաքրքրաշարժ է, որովհետև նա իր մէջ պարունակում է հոգեբանական զարմանալի ճշտութիւն, տիպերի բելիէֆ պատկերացումն և ժամանակակից հակագերի կարծիքները կնոջ ու ամուսնութեան մասին:

VI

Չորրորդ կատեգորիայի պատկերներից, կօմեդիաներից յայտնի է «Կօլեգա կրամպտօն»:

1891 թ. անանալին երեկոներից մէկն էր: Բերլինի «Barg-panaysche Theater» անունով թատրոնը լի էր խուռն բազմութեամբ. այդտեղ էր և Հառուպտման: Ներկայացնում էին Մոլիէրի «Ժլատը»: Երիտասարդ հեղինակի վրայ մեծ տպաւորութիւն թողեց ժլատութեան այդ տրագի-կոմիկական տիպը: Նրա յի-

*) Աւելորդ ենք համարում մանրամասն առաջ բերել նրա բովանդակութիւնը, որովհետև նրա հայերէն թարգմանութիւնը տպագրուեց այս տարրության մասին (ԽՆ 3—8):

շողութեան մէջ զարթեցին հին ծանօթութիւններն ու տպաւութիւնները և նա վճռեց մի կօմեդիա գրել. Մի քանի շաբաթից յետոյ ցանկութիւնն արդէն իրականացած էր *): «Կոլեգագու Կրամպտոն» («College Crampston») էր նոր կօմեդիայի անունը:

Հերոսը պրօֆեսոր Կրամպտոնն է: Նա յայտնի նկարիչ է, բայց դժբախտ է զգում իրան: Այսաեղ էլ կինն է գժբախտութեան պատճառը: Վերջինս հարուստ ու նշանաւոր ընտանիքից է, բայց հոգեպէս աղքատ է և չի հասկանում իր ամուսնուն, չի ըմբանում նրա պահանջները: Դժբախտանում է Կրամպտոն, սակայն Յովհաննէս Ֆոկերատի նման ջուրը չի նետուու, այլ անձնատուր է լինում արբեցողութեան: Նա գինով ու զարեցրով է հանգնում իր վիշտը...

Առաւոտ է: Կրամպտոն զարթնել է քնից: Հաւաքուել են աշակերտանները և սպասում են նրա պատուէրներին: Նա ամենից առաջ իր ծառայ—Լէֆլէրին ուղարկում է գորգը գրաւ դնելու և գարեջրի համար փող ձեռք բերելու: Այդ տեսարանը բաւական բնորոշում է Կրամպտոնի վիճակը՝ նրա արբեցողութիւնն ու նիւթական պայմանները:

Սրբեցող է Կրամպտոն, բայց իր կոչմանն արժանի նկարիչ: Նա շատ բարձր է գնահատում գեղարուեստը և գայրոյթով է պատասխանում պատուէր տուողին, որը մնձամիտ տուով է խօսում նրա հետ:

—Ես նկարիչ եմ և ոչ ներկարար, բայց ականչում է Կրամպտոն:

Նա արհամարհանքով է խօսում գեղարուեստից ձեմարանի մասին, ասում է, որ այնտեղ առաջ գնալ, հոչակ ստանալ կարող են միայն նրանք, որոնք գիտեն ստորանալ ու հաճոյանալ, գիտեն իրանց վրձինը շարժել ուրիշների քմահանոյքի համեմատ: Նա ոգեսրուած քաջալերում է ձեմարանից արձակուած Մաքս Շտրէլէրին, բայց միենոյն ժամանակ պատուիրում է միշտ բարձր պահել գեղարուեստը, շնորհուել ամրոխի կարծիքի առաջ:

—Երբ մարդ մի շնորհալի գործ է ստեղծում, ասում է նա, այն ժամանակ ամեն մի փողոցային դատարկաբան թքում է այդ գործի վրայ և բացականչում: «Դու էլ դատարկաբան դարձիր», բայց միթէ կարելի է լսել այդ բացականչութեանը...

Կրամպտոն շատ դիւրահաւատ մարդ է և այդ յատկութիւնը գնում է նրան ծիծաղելի գրութեան մէջ: Աշակերտաններն ու պրօֆեսորները անհամբեր սպասում են կոմի գալուն... Սպա-

*) Paul Schlenther: „Gerhart Hauptmann“ էր. 154.

Կեկուեմբեր, 1901.

սում է և կրամպտօն, բայց նրա սպասելիքը բոլորովին ուրիշ է, նա կարծում է, թէ կոմսը այցելելու է ձեմարանը միմիայն նրա համար որպէս զի տեսնի իր արժեստանոցը, տեսնի իր նկարները, նա մի առանձին պարծանքով է խօսում իր և կոմսի մտերմութիւն մասին։ Սակայն բնչպիսի հիասթափումն, բնչպիսի ծիծաղաջարժ վախճան։ Կոմսը գալիս է և գնում առանց կրամպտօնի անունն անգամ յիշելու Բայց այդ դեռ բոլորը չէ։ Մի քանի օրից յետոյ կրամպտօն զրկում է պաշտօնից իր արբեցողութեան ու խռովարար բնաւորութեան համար։ Եւ կոմսը ստորագրում է հրաժարեցնելու թուղթը...

Ծիծաղելի, բայց մինենոյն ժամանակ ցաւալի վիճակի մէջ է ընկնում պարծենկու կրամպտօնը։ Ամենքը թողնում հեռանում են նրանից։ Նոյնիսկ կինը հեռանում է, նա գնում է ծնողների մօտ։ Միայնակ է մնում կրամպտօն և կորչում է կեանքի ալիքներում։ Բայց շուտով նրան օգնութեան են հասնում նախկին աշակերտ Մաքս Շտրէլէրը և աղջիկը—Գերտրուդան նըրանք բարձրացնում են կրամպտօնին կորստեան անդունդից և բերում են փրկութեան նաւահանգիստը։ Մաքսը ջերմ սիրով սիրում է Գերտրուդային։ Նա ուղում է երախտագիտական զգացմունք ցոյց տալ դէպի իր նախկին ուսուցիչը, դէպի իր սիրերեցեալի հայրը։ Նրա մեծ եղայրը—Ազօլֆը պեսսիմիստ է և կարծում է, որ այլ ևս անկարելի է ուղղել կրամպտօնին, անհնարին է նրան նորմալ ճանապարհի վրայ կանգնեցնել։ Բայց Մաքսը բոլորովին այլ քարծիքի է... Երկար որոնումներից յետոյ նա գտնում է կրամպտօնին։ Պատկեր նկարել տալու պատրուակով բերում է նրան իր բնակարանը և առաջարկում է աշխատել մի սենեակում, որ զարդարուած է ծիշտ այսպէս, բնչպիս նրա նախկին առանձնասահենեակը։ Ակզրում զարմանում է, նոյն իսկ վիրաւորում է կրամպտօնը, յետոյ երկմուռ, իսկ վերջը երբ տեսնում է իր աղջիան, Գերտրուդային, հասկանում է, թէ բանն ինչումն է...

Նա մնում է իր ազատարարների մօտ... Նա փրկուած է... Բայց մինչև երբ...

«Ժլատի» ազգեցութեան տակ է զրուած «Կոլեգա կրամպտօն», ուստի տեխնիկական մի որոշ նմանութիւն կայ նրանց մէջ։ Այդ երկու պիտիմների մէջ էլ աչքի է ընկնում մի զիսաւոր գործող առաջնորդութիւնը։ Երկուսի մէջն էլ շաղկապուած են մարդկային հոգու կոմիկական ու տարագիկական յատկութիւնները։ Բայց կայ և մի խոշոր տարրերութիւն, որ այսպէս կա-

րելի է բնորոշել.—«Ժլատը» բարոյագիտական կատակերգութիւն է, իսկ «Կոլեգա Կրամպտոնը»—հոգեբանական:

Ասսպասելի աջողութիւն ունեցաւ «Կոլեգա Կրամպտոնը» և թերեւ այդ աջողութիւնն էր պատճառը, որ Հառւպտման հետեւալ տարին (1892) լոյս ընծայեց մի նոր կատակերգութիւն—«Մուշտակը» («Der Biberpelz») վերնագրով:

VII

Պատմական դրամաներից նշանաւորն է «Ֆլորիան Գեյէր»: Ըսթերցողին, երկի, յայտնի կը լինի այն մեծ շարժումը, որ տեղի ունեցաւ XVII դարում, որ այնպէս ցնցեց պապականութեան հիմքը և մեծ հարուած հասցրեց կաթոլիկ եկեղեցում: Գերմանացիներն էին այդ շարժման զեկափարողը: Լիւթերի արծարծած մոքերն էին նրա ոգին կազմողը: Բայց այդ շարժումը զուտ կրօնական բնաւորութիւն ունէր, իսկ հասարակ ժողովուրդը դեռ տանջուում էր մնտեսապէս, դեռ ճնշուում էր աղնուականութեան կողմից: Վերջապէս լցուեց դառնութեան բաժանակը, բոնկուեց գիւղացիների ապստամբութեան ձայնը (1525 թ.):

Սկզբում ապստամբուեցին Շուաբիայի գիւղացիները, իսկ յետոյ նրանց միացան և միւսները: Շուտով ասպարէզ եկան այն նշանաւոր 12 յօդուածները, որոնցով գիւղացիները պահանջում էին՝ վերացնել ճորտութիւնը, թեթեացնել իրանց ծանր լուծը և ազատութիւն չնորհել գիւղական համայնքին: Ահա այդ յեղափոխական տարրի առաջնորդ դարձաւ Ֆլորիան Գեյէր: Նա թողեց ասպետական պաճուծանքը, արհամարհեց աղնուականի փառքն ու պարծանքը և եկաւ գոեհիկ ամբոխի զլուխն անցնելու: Հազարաւոր զոհեր ընկան այդ կուում, բայց գժրախտաբար շարժումը չը հասաւ իր նպատակին, յեղափոխութիւնը չը տուեց ցանկալի հետեանքը: զոհ գնաց և Ֆլորիան Գեյէր:

Պատմութեան այդ տիսուր էջը գրաւել էր և ուրիշների ուշագրութիւնը: Դեռ տարիներ առաջ լոյս էր տեսել դեմոկրատ Վիլհելմ Ցիմմերմանի աշխատութիւնը այդ մասին, մի աշխատութիւն, որի իւրաքանչիւր տողից իւրաքանչիւր բառից երեւում է սէր դէպի ճնշուած ու հարստահարուած գիւղացիները: Այդ գիրքը մինչև օրս էլ գերմանացի բանուորների ընթերցանութեան ամենասիրելի նիւթերից մէկն է: Պարզ է ուրեմն թէ ինչո՞ւ ճնշուածների պաշտպան Հառւպտմանը կանգ առաւ:

այդ նիւթի վրայու «Ֆլորիան Գէյէր» գրեց նա իր պատմական դրամայի վերնագիրը:

Այդ գրաման բազկացած է նախերգաններից և հինգ գործուղութիւնից, որ տեղի են ունենում գլխաւորապէս Վիւրցբրուգ, Ռոտենբուրգ և Նվայնֆուրտ քաղաքներում:

Նախերգանները պատկերացնում է ասպետների վիճակը Վիւրցբրուգ ամրոցում, նրանց զայրոյթը ¹² յօդուածի առթիւ և առհասարակ նրանց խորհրդակցութիւնը ընդդէմ ապստամբ գիւղացիների: Այստեղ ասպետները այն կարծիքն են յայտնում, թէ գիւղացիների շարժումը հակառակ է օրէնքին, հակառակ է բարոյականութեանն ու նահապետական սովորութիւններին, Բայց այստեղ է նաև Գէյէրի գաղափարակիցը—Հանչալայնը, որը պաշտպանում է գիւղացիներին, արդարացնում է նրանց շարժումը:

Առաջին գործողութիւնը պատկերացնում է գիւղացիների յաղթանակը, որը այնքան փառք ու մեծարանք է հասցնում Ֆլորիան Գէյէրին:

—Quot capita, tot sententiae *), բացականչում է հումանիստ բէկտօր Բեկէնմէչը:

—Եղբայրութիւն, ազատութիւն ու հաւասարութիւն, լսում է ամեն կողմից, բայց իւրաքանչիւրը իր շափով, իր տեսակէտով է ըմբռնում այդ բառերի իմաստը...

Մնացած չորս գործողութեան ընթացքում գարգանում է գիւղացիների կորստարեր պարտութիւնը, որ և վերջանում է Գէյէրի մահով: Ստոր դաւաճանութեան զոհ է զնում ազատութեան պաշտպանը, ոչնչանում են նրա «սե խմբերը», հանգչում է ապստամբութեան կայձը:

Հառապտման իր այդ դրամայով ուզեցել է պատկերացնակ մի խոշոր պատմական երեսոյթ, մի գաղափարական հերոս, բայց դժբախտարար փորձն անաջող է անցել:

Ճիշտ է, գրաման տալիս է մի ամիսի գաղափար պատմական անցքերի մասին, բայց շատ թոյլ է տեխնիկայի կողմից:

Դէպքերը տեղի են ունենում գլխաւորապէս բեմից դուրս, իսկ բեմի վրայ լսում են միայն անվերջ պատմութիւններ ու դատողութիւններ դրանց մասին:

Հէնց այդ պատճառով էլ գրաման էպօսի տպաւորութիւն է թողնում:

Իսկ գլխաւոր հերոսը—Գէյէր զուրկ է սեփական պատմութիւնից, նա աւելի շատ խօսում է քան թէ գործում նրա

*) Որքան գլուխներ, ալնքան կարծիքներ:

ներքին աշխարհը, նրա հոգու ելեջերը մնում են մթին քօղով ծածկուած և ընթերդողը չի կարողանում որոշ գաղափար կազմել այդ գիւղացի դարձած ասպետի բնաւորութեան մասին: Իսկապէս հերոսը, իր գործով պիտի ցոյց տայ հերոսութիւնը, Մնացած երեսոյթները նրա շուրջը պիտի պտտուեն: Այդպէս են, օրինակ, Շեքսպիրի բոլոր հերոսները: Խակ Հառւպտմանը ընդհակառակը պատկերացրել է շրջապատող հանգամանքներն ու դէպքերը, թերես ենթագրելով, թէ դրանցից պարզ կը լիսի և հերոսի կատարած գերը...

VIII

Դառնանք այժմ Հառւպտմանի այս երկերին, որոնց մէջ գերակառող գերը բռնում է միստիկական տարրը: «Զրասոյզ զանդը» և «Հաննելը» է դրանց անունը:

Առաջինի ֆարուլան հիմնուած է ժողովրդական աւանդութեան վրայ, այս աւանդութեան, որի մասին խօսք է լինում և «Ֆլորիան Գէյէր» դրամայում:

—Երկրի մէջ տեղում,—ասում է հումանիստ Բէգչնուէյէր, կախուած է մի մնծ զանդ, որը երգեցէ պիտի հնչեցնէ իր ձայնը, այնպէս բարձր, այնպէս ահարկու, որ նոյն խակ խովերը պիտի լսեն... Դուք կեղկերիչներ, մարդկային հոգին ու մարմինը հարաստահարողներ, բաց արեք ականցներդ և հասկացէք, որ մօտ է ձեր ժամը...

Դեռ ութսունական թուականներին Հառւպտման «Մեռած մետաղը» սիմբոլական ձեռվ երգել է այդ զանդի մասին, որի ձայնը ոչ ոք չի լսում այս աշխարհում:

Դյու մինչոյն աւանդութեան մասին յիշում է և Լիբրինդ Սլեքսի վէպերում. դրա վրայ է հիմնուած և Շիլէրի «Զանգակի երգը» ու Գեօթէի նշանաւոր բալլադան: Սակայն դրանցից ոչ մէկը այնքան մտածելու նիւթ չեն պարունակում իրանց մէջ, որքան Հառւպտմանի երկը, որ առաջին անգամ 1896 թ. լոյս տեսաւ և մինչև օրս մօտ 50 հրատարակութիւն է ունեցել, միայն գերմաններէն լեզուով:

Զանգակագործ Հենրիին է դրամայի գլխաւոր հերոսը, նա ուղում է շինել մի անզուգական զանդ, որը կարողանար հնչեցնել սէր ու եղբայրութիւն, ճշմարտութիւն ու արդարութիւն: Ահա վերջապէս նրա նպատակը իրագործուած է, տենչալի զանդը պատրաստ է: Հենրիիս ուղում է բարձրացնել նրան սարերի գագաթը, որտեղ ջրային ոգին իր «բրէկէկէսնա»

է հնչեցնում, որտեղ անտառային ոգին ձիւլից-ձիւղ է թռչկո-
տում...

Ահա մօտ է Հենրիխը իր նպատակին, մօտ է զանգը սա-
րերի գագաթին, Բայց յանկարծ կառքը շուռ է զալիս և զանգը
գլորուում է դէպի անդունդը, դէպի լճի խորքը։ Հենրիխի ամ-
բողջ սիրան ու էութիւնը այդ զանգի մէջն էր։ Ընկնում է
զանգը, ընկնում է և նրա վարպետ—Հենրիխը։ Ահա նա սարի
ներքենումն է։ Քարերը ջախջախել են մարմինը, բայց նա դեռ
կենդանի է։ Նրա կիսաշունչ մարմինը գտնում է կախարդուհի
Վիտիխան և բերում է իր խրճիթը, որտեղ ապրում է գեղանի
ֆէան—Շառաւտենդելայնը։

Հենրիխը տեսնում է նրան և կարծես իր մէջ մի անհաս-
կանալի ոյժ է զգում։ «Ես քեզ տեսել եմ դեռ շատ առաջ, ա-
սում է նա Շառաւտենդելայնին, ես լսել եմ քո ձայնը և
հէնց այդ ձայնն էր, որ ուզում էի հնչեցնել տալ իմ զանգի մի-
ջոցով, բայց այդ հրաշքն ինձ չը յաջողուեց և ես լաց եղայ
արին արցունքով»...

—Դու լաց եղար...?! Ջարմացած բացականչում է ֆէան,
Բնչպէս։ Ես չեմ հասկանում, ինչ է արցունքը...

Այդպիսի անմեղութիւնն ու անսարատութիւնն աւելի հրա-
պուրում է Հենրիխին։ Նա աղերսում է վերցնել իր ձակատից
փէշ պասկը... Նրան այլևս չի գրաւում ոչ կոփւ, ոչ պատիւ և
ոչ փառք։ Հարկաւոր է միայն սէր—Շառաւտենդելայնի սէրը։
Իսկ ֆէան չի հասկանում այդ խորհրդաւոր խօսքերի իմաստը.
Չի հասկանում Հենրիխի տենչանքը։ Նրա համար պարզ է միայն
մի բան՝ Հենրիխի մահը մօտ է և նա վազում է պառա։ Վի-
տիխին կանչելու Բայց անտարբեր է Վիտիխը։ Նրան չի հե-
տաքրքրում Հենրիխի վիճակը։ Նա գիտէ, որ այդ է լմնելու բո-
լոր մարդկանց վախճանը։ ուստի և փոխանակ օգնութեան հաս-
նելու, հանդարտ կերպով սկսում է կերակրել իր սիրելի կատ-
ուին և անտառային ոգիներին։

Հենրիխին պատահած փորձանքի լուրը տարածւում է ամ-
բողջ գիւղում։ Գալիս են տեղական պաստորը, ուսուցիչն ու
սափրիչը դժբախտ վարպետին գտնելու... Երկար որոնումնե-
րից յետոյ նրանք հասնում են կախարդուհու խրճիթին և այդ-
տեղից տանում կիսամեռ Հենրիխին։

Նրանց հեռանալուց յետոյ սկսում է անտառային էլֆա-
ների պարը։ Փայլում է լուսինը աղօտ ճառագայթներով, հեռ-
ուից, շատ հեռուից լաւում է որոտ ու կայծակը Վերջապէս գա-
լիս է Շառաւտենդելայնը և միանում պարողներին։ Գալիս է և
անտառային ոգին, որոտն ուժեղանում է։ Թափւում է հեղեղ և

ԷլՓաների քնքուշիկ կրգեցողութեան հետ հնչում է նրա կոպտաձայն երգը—Գարնանային սիրոյ երգը: Լուսմ է Բառաւենդելայնը երգի ելեջերը և մոռայլում: Նրա անարատ սրտում խօսում է սիրոյ առաջին զգացմունքը և թափիծի արցունքը քամում է աչերից: Հանդարատում է բնութիւնը. մենակ է Բառաւենդելայնը, բայց ահա ջրհորից դուրս է գալիս ջրային ոգին—Նեկելմանը Նա տեսնում է Բառաւենդելայնի տիրութիւնը. տեսնում է արցունքի կաթիլը նրա ձախ աշքում և բացականչում.

—Օ՛հ, ինչ հրապուրկիչ կաթիլ է դա, ինչ հրաշալի յակինթ. նրա մէջ երեսում է ամբողջ աշխարհի թափիծն ու երջանկութիւնը: Արցունք է այդ կաթիլի անունը:

Իսկ զարմացած Բառաւենդելայնը մրմնջում է ինքն իրան.

—Այժմ ես հասկանում եմ, թէ ինչ է արցունքը...

Սիրահարուած է Նեկելմանը Բառաւենդելայնի վրայ. Նա աղերսում է նրանից գնալ ջրհորի խորքը և այստեղ ապրել միասին, սիրել միմեանց: Բայց ֆէան չի համաձայնում, նա ուղում է աշխարհ մտնել, մարդկանց մէջ ապրել...

Իսկ զարպետ Հենրիխը... Նա արդէն իր տանն է, նրա շուրջն են կինն ու երեխաները: Անսպասելի փորձանքը սզի մէջ է գրել ամբողջ ընտանիքին: Տանջում է Հենրիխը. բայց այդ տանջանքը աւելի հոգեկան է, քան թէ գիզիկական: Նա դառն կսկիծով պատմում է ինոչը:

—Իմ շինած զանգն անպէտք էր, Մագդա, լեռնային բարձրութեան համար: Նա անդունդ գլորուեց, որովհետև անկարող էր լեռներում արձագանք բարձրացնել... Հովտում նա կարող էր զանգանարել, իսկ լեռներում—ոչ... Ա՛խ, եթէ յետ գար իմ երիտասարդութիւնը, այն ժամանակ ես նոր ոյժ, նոր եռանդ կունենայի այդ մեծ գործի համար...

Մագդան չի հասկանում Հենրիխի հեռաւոր նպատակը, բայց անշափ սիրում է նրան և պատրաստ է օգնել ամեն բանում... Վերջապէս գալիս է պաստօրը և յայտնում է, որ մի համր կին ուզում է բժշկել Հենրիխին: Ներս է մտնում խորհրդագաւոր բժշկուհին: Դա Բառաւենդելայնն է, միայն կերպարանափոխուած: Հենրիխի հետ մենակ մնալուն պէս նա բժշկում է նրան իր հրապոյրներով: Առողջանում է Հենրիխը, որպէս զի ընորից ապրի, ցանկայ ու տոկայ, ճգտի ու ստեղծէ... Նրա յանկարծակի առողջանալը հրաշք է թւում բոլորին... Բայց հրաշքի առարկան երկար չի մնում իր ընտանիքում, իր հարեւաների շրջանում: Նա Բայուտենդելայնի հետ բարձրանում է սարերը, որպէս զի այստեղ սկսէ իր մեծ գործը...

Հենրիխն աշխատում է լեռնային բարձրունքի վրայ: Նա

թողել է տուն ու հայրենիք, կին ու երեխաներ և ամբողջապէս անձնատուր է եղել Բառավենդելայնի հրապոյրքին Նա անդուր, անդադար աշխատում է թզուկների ընկերակցութեամբ. Նա ու զում է շինել մի չը տեսնուած զանգ, որի ձայնը հնչելիս պիտի լսուի սոխակների դայլայլիկը, աղաւնիների մնչիւնը. Չերք արցունքի ազգեցութեամբ պիտի հալչի մարդկային սրտի սառոյցը, պիտի ոչնչանայ կիրքն ու նախանձը, վիշտն ու տանջանքը... Նա այսպէս ոգեսորուած է այդ զաղափարով, որ մոռացել է ամեն բան... Գալիս է պաստօրը նրան համոզելու, որ տուն վերադառնայ, բայց Հենրիխը մոռում է անդրդուելի...

—Զեր խօսքերն ինձ վրայ նոյնքան են ազդում, ասում է նա պաստօրին, որքան և ջրասոյզ զանգը, որը այլ ես երբէք զօղանջելու չէ...

—Կը զօղանջէ, վարպետ, կը զօղանջէ, կրկնում է պատօրը և հեռանում...

Հենրիխը շարունակում է իր գործը, Նա վերջի վերջոյ կորցնում է մարդկային զգացմունքները, դառնում է դաժան ու անգութիւն...

Ժամանակը ահուում է առաջ ու առաջ, իսկ Հենրիխը դեռ սարումն է, զեռ աշխատում է իր զանգի վրայ, նա արդէն բուլորովին մոռացել է ընտանիքին, Բայց մի օր սարալանջում երեւում են երկու մանկիկներ, որոնք հազիւ հազ բարձրացնում են մի կաւէ անօթ։ Հենրիխի զաւակներն են այդ մանկիկները. Մագդանի դառն արցունքներն են նրանց բարձրացրածը։ Հենրիխը ճանաչում է նրանց և մի տխուր նախազգացումով բացականչում.

—Ո՞ւր է Մագդան...

—Նա մեռաւ... պատասխանում են երեխաները, նա խեղդուեց լճում և քեզ շատ բարե ուզարկեց...

Բօթաբեր լուրը զնցում է Հենրիխին, նա լիշում է իր անցեալը, պատկերացնում է անձնուէր Մագդայի կրած տանջանքները և գառնացած սրտով անիծում է իր գործն ու հրապուրիչ ֆէային.

—Կորի՞ր, հեռացիր ինձանից, ասում է նա Բառաւենդելայնին։

Եւ Բառաւենդելայնը հեռանում է ու յուսայատութեան մէջ անձնատուր լինում Նիկելմանին—ջրային ոգուն։

Նա նրա կինն է դառնում։ Իսկ խորը վիշտը հալածում է Հենրիխին Նա ընկճուած է ու յուսահատ և ուզում է մի անգամ էլ տեսնել իր սիրեցեալ Բառաւենդելայնին։ Պառաւ Վիտիխան յայտնում է, որ այդ բանի համար պիտի իր ամբողջ կեան-

քը վճարէ: Հենրիխը համաձայնում է: Յայտնւում է Բառակենդելայնը և հիացած գրկաբառնում է Հենրիխին: Վերջինս իր սիրեցեալ ֆէայի գրկում փշում է վերջին շունչը, իսկ այդ բուպէին նրա ականջին համում է ջրասոյզ զանգի զօղանջիւնը—մյնքան տիրապին, մյնքան խորհրդաւոր: Այդ զօղանջիւնը վերջին անգամ զարթեցնում է մեռնող Հենրիխի հաւատը, թէ պիտի բացուի արշալոյսը, պիտի փայլէ արեգակլ...

Կարելի է ասել Հառապտմանի աչ մի գրուածքը այնքան թեր ու դէմ կարծիքներ չէ առաջացրել, ինչպէս «Զրասոյզ զանգը»: Շատերը նրան մինչև եօթերորդ երկինքը բարձրացրին, շատերն էլ մինչև ոչնչութեան անդունդը իջեցրին: Այս դասակարգի քննադատների շարքումն էր և և Տօլստօյ, որին դուր չեկաւ գրամայի ձեր^{*)}, նա կտրուկ կերպով յայտնեց իր բացասական կարծիքը, եւ ուրիշ կերպ էլ չէր կարելի սպասել «ՊՌՈ ՏԱԿԵ ԽԵԿԿԾԵՑՎՈ»-ի հեղինակից...

«Զրասոյզ զանգից» ոչ պակաս միստիկական է և «Հանանելէի» բովանդակութիւնը:

Աղքատիկ ընտանիքի զաւակ էր Հաննելէն: Նրա մայրը կարիքների ծանր լծի տակ ճնշուելով, մեռաւ, որը ու անտէր թողնելով մատաղահաս Հաննելէին: Կենդանի էր նրա խորթ հայրը—քարտաշ Մատաերնը, բայց նրա մէջ արդէն վաղուց անհետացել էր հայրական զգացմունքը, դորովալի խնամքն ու հոգատարութիւնը: Նա գիտէր միայն հարբել, թափառել այս ու այն կողմէ և տուն գալուն պէս ծեծել ամմեղ Հաննելէին:

Ի՞նչ կարող էր անել գժբախտ որբուհին: Նա տանջուեց, տանջուեց և վերջը վճռեց վերջ դնել իր կեանքին: Անվերջ թշուառութիւնը զարգացրել էր նրա երեակայութիւնը: Նրան թւում էր, թէ երկնային բարձրութիւնից միշտ դէպի իրան է կանչում մօր քնքուչիկ ձայնը...

Հառապտման իր այդ գրամայով ուզեցել է ցոյց տալ, թէ ինչպէս ներկայ սօղիալական կեանքում, ընտանեկան չարաբաստիկ պայմաններում զոհ են գնում նաև գեռահաս էակները —անմեղ զաւակները և նա միանգամայն հասել է իր նպատակին: Դրանից աւելի ազգու, աւելի ուժեղ ձևով չէր կարելի ներկայացնել ընտանեկան թշուառութեան զոհուած որբուհու հոգեկան ամբողջ աշխարհը:

Ինչպէս դէռւար չէ համոզուել մեր բերած օրինակներից, Հառապտման երեք չէ հեռացել նատուրալիզմի ընդգծած ու-

^{*)} „Научное Обозрение“, 1901, № 5.

զիից, բայց մինոյն ժամանակ երբէք ամբողջապէս չէ կանգնել նրա վրայ: Նրա գրուածքներում գրեթէ միշտ շաղկապուած են եղել բնականն ու գաղափարականը, իրականն ու վերացականը:

Նա ունի մի զգայուն սիրտ, որ միշտ հակուած է դէպի թշուառների ու ընճուածների կողմը, ունի կեանքը դիտելու ընդունակութիւն, որ հասկանում է ներկայ սօցիալական ցաւը և կարողանում է զատել դառն իրականութիւնը պատահական երևոյթներից. վերջապէս ունի գրելու մի առանձնայատուկ չնորհք, որ գրաւիչ, նոյն իսկ հրապուրիչ է գարձնում նրա երկերը:

Դեռ երիտասարդ է Հառուպտմանի գրիչը և ընդունակ է ստեղծագործել, և հասարակութիւնը սպասում է նրանից աւելի մեծ երկեր...

b. ԹՈՓՉԵԱՆ